ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, ձ-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

06.09.2018թ.

ՀՀ Սփյուռքի նախարար
Մխիթար Հայրապետյանին

338-ի 8

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր 2018 թվականի օգոստոսի 17-ի թիվ 05/06/182518 գրության՝ հայտնում ենք, որ գրությամբ տրամադրված տեղեկատվությունն ամբողջական չէ:

Մասնավորապես՝ պատասխան գրության մեջ տրամադրվել է միայն տեղեկատվություն 2017 և 2018 թվականներին ՀՀ պետական բյուջեով նախատեսված <<Աջակցություն մերձավոր սփյուռքին>> ծրագրի շրջանակներում ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից տրամադրված գումարի վերաբերյալ, այնինչ այլ տեղեկություն չի տրամադրվել՝ նշելով, որ վերջինս պարունակում է պետական, ծառայողական, բանկային և առևտրային գաղտնիք:

Հարկ ենք համարում նշել, որ նույնաբովանդակ հարցմանը՝ ՀՀ նախագահի և կառավարության աշխատակազմերը, ինչպես նաև ՀՀ բոլոր նախարարությունները, բացառությամբ Սփյուռքի նախարարության, տրամադրել են ամբողջական պատասխան:

Ուստի, խնդրում ենք <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված 5-օրյա ժամկետում՝ լիարժեք պատասխանել 2018 թվականի օգոստոսի թիվ 338-ի 4 հարցմանը՝ տրամադրելով ամբողջական պատասխան:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ
Շուշան Դոյդոյան